

**ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՇԱՊԱԳՈՐԳԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Մարգարյան Ա. Վ.**

Հոդվածում հայկական գորգը դիտարկվում է իբրև տեղեկատվության աղբյուր, տիեզերքի խորհրդանիշ, տարերքների ամբողջություն և տոմարագիտական կառուցվածք: Գորգի մակերեսը դիտվել է իբրև տիեզերքի պատկեր, երկնային հատակագիծ, որի կառույցը փոխված է իր մակերեսի վրա՝ որպես հանդիսարան: «Մենք բոլորս պետք է սովորենք, որ հայկական գորգարվեստը, ինչպես նաև հայկական գորգերի արտագաղթը Բալկաններ, Անատոլիա և նույնիսկ Հարավային Եվրոպայի որոշ շրջաններ ունեցել է շատ մեծ ազդեցություն աշխարհի գորգագործության վրա, քան կարծում են մինչ այժմ», - վկայում է մշակութաբան Ուլրիխ Շուրմանը:

Բանալի բառեր. հայկական գորգ, զարդանախշ, վիշապագորգ, նախշ, օձագորգ, մշակույթ, գույն, սակրալ, տիեզերագիտական, բուսական կենդանական նախշ:

Նախաբան: Գորգարվեստի ուսումնասիրությանը վերաբերող գրականությունը հիմնականում հանգում է գորգադաշտում պատկերված զարդամոտիվների նկարագրությանն ու վիզուալ համեմատություններից բխած դասակարգմանն ու սահմանմանը: Մինչդեռ եղած գրականության մեջ գրեթե չենք հանդիպել գորգի՝ որպես տիեզերքի պատկերի /ինչպես կառուցողական արվեստում/, կարևոր զարդամոտիվների դասավորությանը, նրանց սխեմատիկ կառուցման համաչափական օրենքի բացահայտմանը: Հոդվածի սահմաններում փորձենք պարզել վիշապագորգի զարդի իմաստը, զարդանախշի սեմիոտիկ կառուցվածքը:

Գորգերը զարդագիր տեքստեր են. նրանց մեջ պահ է տրված մեր նախնիների հնագույն պատկերացումները, հավատալիքները, պաշտամունքը, կրոնը: Գերմանացի մշակութաբան Ֆոլկմար Գանցհորը

նկատում է. «Հայկական զարդանախշի իմ վերլուծությունը ցույց է տվել, որ գորգի բոլոր զարդանախշերը կարելի է հանգեցնել լիովին սակավաթիվ հիմնաձևերի, որոնք իրենց հերթին Ք. ա. II-I հազարամյակներից ի վեր հայկական մշակութատարածքում առկա ավանդաձևեր են: Արևելյան գորգի պատմությունը և հայկական գորգինը հիմնական մասերով մինչև XIX դարի կեսերը նույնանում են: Որպես լիովին տիպիկ հատկանիշ՝ ես կնշեի վարիացիաների հրճվանքը, հատկապես գույնի մեջ» [1]:


Հազարամյակների խորքից եկող հայոց մշակույթը գորգին տվեց սակրալ խորհրդանշաններ՝ զարդանախշերի միջոցով պահպանելով հազարամյա ազգային հիշողությունն ու հնագույն հեթանոսական գիտելիքները: Նրա վավերագիրն ու պահպանը հիմնականում եղել է հայ կինը, ում կամքի ու աշխատասիրության շնորհիվ էլ հազարամյակներ շարունակ պահպանվել ու սերնդեսերունդ փոխանցվել է հայկական զարդանախշը: Գորգերի զարդանախշ գաղափարագրերը սրբազան հասկացություններ են, որոնք դարեր շարունակ հիմնականում պահպանել են իրենց ոճային ու գունային նշանակությունը: Դա տեղի է ունեցել հին գորգերից նորերի ընդօրինակման շնորհիվ, երբ առաջնայնությունը տրվել է գաղափարին: Գորգերը հայ ժողովրդի ինքնության անկրկնելի վավերագրերն են՝ ստեղծված հայ կնոջ ձեռքով: Շատ դեպքում հետագա կիրառությունների ու վերապատկերումների ընթացքում այն կորցրել է նախնական ծիսահմայական իմաստավորումը՝ պահպանելով, սակայն, գույնի և ձևի նույնությունը արքեոտիպերի հետ: Պատահական չէ, որ գարդ (նույնն է՝ «արդ») բառն ունեցել է նաև ձևի իմաստ: Հայկական գորգերի ոճը բնութագրվում է հորինվածքում բուսական, կենդանական, երկրաչափական մոտիվների միասնությամբ, որոնցից յուրաքանչյուրը նպատակաուղղված է զարդանկար տեքստում որոշակի գաղափարի արտահայտմանն ու ամբողջացմանը:

Ֆոլքլորար Գանցհորնը նկատում է. «Գորգը հատակի երեսարկ չէ, այլ միանշանակորեն գործության խորհրդանիշ... և կարող է ունենալ չարխափան նշանակություն» [1]: Գորգը տիեզերքի խորհրդանիշ է, որի կառույցը զարդերի տեսքով փոխված է գորգի մակերեսին: Հողվածի տիրույթում մենք անդրադառնալու ենք վիշապագորգերի զարդանախշերին ու դրանց նշանակությանը:

Հայկական գորգարվեստի գոհարը համարվող «Վիշապ» կոչվող գորգերը առանձնանում են յուրօրինակ սեմատիկ զարդանախշերով,

ինչպես նաև որոշակի գունաշարով: Գորգարվեստի մասնագետներ Ջ. Բրեքն ու Ֆ. Մորիսը հայկական գորգերի համար ամենահատկանշական զարդամոտիվը վիշապն են համարում: Տարբեր մեկնություններ կան գորգի ոճավորման ու ձևակազմության շուրջ: Վիշապը առասպելական արարած է: Այն ժառանգն է նաև ավելի վաղ շրջանի ջրամբարների, ջրի ակունքների պաշտամունքի: Եվ քանի որ ակունքը կենսական ուժի, տիեզերական առանցքի, Աստվածային ոգու, անմահության խորհրդանիշ էր, վիշապի մեջ մարմնավորում էր տիեզերքի հակադիր ոլորտների՝ երկնքի ու երկրի միասնությունը, կյանքի հարատևությունը: Վիշապի նախնական կերպարը հակամարտող զույգ խորհրդանիշերի՝ օձի և թռչունի, ինչպես նաև ջրի ու կրակի երևակայական միաձուլումն է: Այստեղից էլ նրան տրված «հրեղեն օձ» անունը:

Վիշապը առասպելական արարած է: Նրա հետ է կապվում ջրի պաշտամունքը, կենաց ծառի, բարօրության պահպանությունը դրական նշանակությամբ, միաժամանակ՝ անդրաշխարհի, ստորերկրյա մութ ջրերի մարմնավորումը՝ բացասական նշանակությամբ: Այս առումով բոլոր ժողովուրդների առասպելներում առկա է վիշապի ու հերոսի կամ որևէ հակամարտության սյուժեն, որում հերոսը միշտ հաղթում է՝ ազատելով նրա կողմից արգելափակված ջրի հոսքը և նրան իբրև տուրք մատուցված աղջկան [2]: Ըստ արվեստագետ Կ. Ավետիսյանի՝ վիշապը հանդես է գալիս իբրև երկինքն ու երկիրը իրարից բաժանող ու միացնող բարի կենդանի: Այս մտածողության դրսևորմանը հանդիպում ենք այլ ժողովուրդների բանավոր նյութերում. Բուլիվիայի հնդկացիների առասպելի համաձայն՝ մի անգամ երկինքը ընկնում է երկրի վրա, և վիշապ օձը պարուրվում է երկուսի միջև՝ իր վրա կրելով երկուսին անջատելու գործը: Սլավոնական հավատալիքներում օձավիշապն է միացնում երկինքն ու երկիրը: «Մահաբհարադայում» Շեդա օձը Բրահմայից, իբրև պարզև, հանձնարարություն է ստանում իր մարմնի գալարով պահել երկիրը [3]: Այստեղ վիշապը ձեռք է բերում նոր հատկանիշ՝ երկնքից իջնելու առումով դառնալով երկնքի, արական, որը իջնում է իր աստվածային բնույթով իգական ջրերին միանալու: Այդ երկինք-երկիրը պահող-անջատող ու միացնող զարդաձևը Կ. Ավետիսյանը անվանել է «վիշապազարդ»՝ S-անման և Տեր անվանումներով:



Նկ. 1. ա/ Վիշապագորգի զարդանախշ, բ/ Վիշապակարպետ «Զիլե»/թելթող/

Երկու S-աձև «վիշապների» վիշապ ամուսինների գաղափարանշանով զարդ է գտնված խեցեղենի վրա, որը հայտնի է որպես հավերժության նշան՝ իր տարբեր դրսևորումներով: Դրանց կրկնությունը ծնում է ծավալային զարդաձևեր, որոնք նույնպես գործածվում են իբրև գորգագարդ, որոնց կեռիկները երկրաչափականացված են և ունեն եռանկյան տեսք, հետևաբար նման զարդերը կարող են անվանվել նաև «դիցաբանական» զարդեր: Մեծ տեղ է հատկացվել առասպելներին, որոնց բառային արժեքը կարելի է գտնել Ք. ա. 3-2-րդ հազարամյակից մեզ հասած խեցեղենի վրա պատկերված զարդերի ու կարգավորված գաղափարների հիման վրա: Միջնադարյան հայկական հին գորգերից է վիշապի դեմ փյունիկի պայքարը բովանդակող կենդանապատկեր գորգը:



Նկ. 2. Վիշապագորգի խորհրդարանությունը ըստ Հ. Կոզիրեյոկյանի

Մյուս կարևոր զարդանախշը բնութագրում է օձագորգերը: «Օձագորգեր» կոչվող գորգերի անվանումը միգուցե առաջացել է վիզուալ ընկալման արդյունքում, քանի որ «ջուր» գաղափարանշանի շեշտված մասերը ոճավորված օձեր են հիշեցնում: Մասնագետները գտնում են, որ պարզությունը և ձևի ճշտությունը հանդիսանում են բովանդակության միակողմանի դիտարկման արդյունք. որքան սահմանափակ է բովանդակությունը, այնքան քիչ կառուցվածքային առանձնահատկություններ են պահանջվում նրա արտահայտման համար: Հայկական

գորգերի գորգապատկերների գեղագարդման համակարգում լայնորեն հայտնի է հայերեն մեծատառ «Տ»-ին նմանվող ու դրա բազմատեսակ տարբերակներով պատկերվող, այսպես կոչված, օձագալար զարդանախշը: Արդեն ավելի քան մեկ դար այն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է: Հայաստանի տարբեր պատմաագրագրական մարզերում արված հետազոտություններից պարզվել է, որ այն առնչվում է օձի, ձկան ու ջրի հետ: Գամիրքում այն հայտնի է «օձի ձագ», Վասպուրականում՝ «ջրեր», Լոռիում՝ «ձկան ողնաշար» անվանումներով [4]: Ինչպես բոլոր առասպելաբանություններում, ամեն ինչ ներկայացնում է տիեզերքը /կոսմոս/, ուր մարդը և իր կյանքը նույնպես կապվում են կոսմոսի և կոսմիկական տարրերի հետ, և դրա համար էլ տարերքներն էլ են մարդացվել:

Այսպիսով, գորգադաշտի չափերն ու հիմնական զարդերի տեղաբաշխումն ու դասավորությունը բխում է մոդել գծագրի կոնստրուկտիվ կետերից, որոնք էլ պայմանավորում են ամբողջի ու մասերի հարաբերակցությունը՝ դառնալով լիարժեք գեղարվեստական ստեղծագործություն: Գորգի համամասնություններն ու զարդանախշերի տեղադրությունն ու տեղաբաշխումը կատարված են նույն մեթոդով, ինչ ճարտարապետական կառույցները, ինչը խոսում է միևնույն մշակութային հենքի ծննդի մասին: Բացարձակ հավասարության նշան է դրվում բնության պատկերված առարկայի կամ զարդի միջև: Վիշապագորգերը կարդացվում են իբրև տիեզերքի մասին հայերի պատկերացումների ամբողջություն, որոնց հիմքում ընկած են սրբազան սերմի, աշխարհի չորս տարրերի, իգական ու արական էներգիաների, կենաց ծառի, հավերժության, արևի, լուսնի, մոլորակների, պաշտպանիչ գոտիների իմաստը պարունակող ծիսահմայական զարդանախշերը:

СИМВОЛИКА АРМЯНСКОГО ВИШАПАГОРГА

Маркарян А. В.

Армянский ковер является источником информации, символом космогенеза, единством стихий и календарной системой. Поверхность ковра рассматривается в виде космического отражения небесного плана, который отображается на поверхности. "Мы должны научиться тому, что армянское ковроделие, а также перенесение армянского ковра на Балканы, в Анатолию и даже в Южную Европу, имело большее значение

для развития всемирного ковроделия, чем принято было считать до сих пор", - свидетельствует культуролог Уильрих Шурман.

Ключевые слова: армянский ковер, орнамент, вишапагорг, одзагорг, культура, цвет, сакральный, космогенез, растительный орнамент, животный орнамент.

THE SYMBOLIC MEANING OF THE ARMENIAN DRAGON RUG

Markaryan A. V.

The Armenian carpet is a source of information, a symbol of the universe, a set of elements - a calendar structure. The surface of the carpet was viewed as an image of the universe, a celestial plan, the structure of which is spread on its surface as a spectator. A culturologist Ulrich Schurman states: "We all need to learn that Armenian carpet weaving, like the emigration of Armenian carpets to the Balkans, Anatolia and even some parts of southern Europe, has had a greater impact on world carpet weaving than previously thought".

Keywords: Armenian carpet, ornament, dragon rug, rug, culture, colour, sacral, cosmological, plant pattern, animal pattern.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գանցհորն Ֆ. «Քրիստոնեաարևելյան գորգը. ակունքներից մինչև XVIII դարն ընկած պատկերագիտական զարգացման ուրվագիծ»: Երևան: Հայաստանի պատմության թանգարան: 2013: 536 էջ:
2. Հայկական գորգարվեստը XVII-XX դդ.: Հայաստանի պատմության թանգարան: Երևան: «Գաս Պրինտ» հրատարակչություն: 2012: 205 էջ:
3. Арнхейм Р. Искусство и визуальное восприятие. Москва. Издательство «Прогресс». 1974. 384 с.
4. Թեմուրճյան Վ. Գորգագործությունը Հայաստանում <https://www.academia.edu/journal//> (21.08.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգարյան Ա. Վ. – արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ, Հումանիտար

առարկաների ու արվեստաբանության ամբիոնի վարիչ

Էլ. փոստ՝ araxmargaryan@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 16.09.2021

Գրախոսվել է՝ 18.11.2021